

հրաւիրեալ, երթիցէ ապա առ կայսր: Առեալ եւ Ներսէսի ընդ իւր զՅովհաննէս եպիսկոպոս, զերբեմն իւր դաստիարակ, եւ զմիւս հոշակաւոր վարժապետն Սկեւոյ՝ զԳէորգ վարդապետ, եւ արս քսան յաշխարհականաց, մինչ (որպէս թուի 'ի դարձին 'ի Հռոմկլայէ) յաւուրս Պենտեկոստէից, որ է յէլս կոյս ամսեան մայիսի (1190), մերձ եղեւ 'ի սահմանս Մարաշայ, յարձակեցան 'ի վերայ նոցա Քուրդք եւ Թուրքմանք²², կոտորեցին զամենայն ուղեկիցսն, բաց յերիցն յիշեալ վարդապետաց, զորոց եւ զկարասիս գերեցին, ընդ որս եւ զինքնագիր նախօրինակ Պատարագամեկնիչ գրոց Սրբոյն, ընդ որ եւ յոյժ վշտացաւ, եւ ճողոպրեալ դարձաւ երկոքումբք ընկերօքն առ Լեւոն: Իսկ սորա լուեալ զմերձենալ կայսերն՝ կրկին փութացոյց զՆերսէս թղթովքն, թերեւս եւ պատարագօք, ընդառաջել նմա. եւ Սրբոյն առեալ ընդ իւր միւսանգամ զգիտնական վարդապետն Գէորգ՝ էջ 'ի Տարսոն, նաւարկել 'ի Սելեւկիա եւ հանդիպել ինքնակալին: Բայց յառաջ քան զնա առաքեալ էր Լեւոնի ա՛յլ դեսպանս ընդ ցամաք, եւ զատ յայլոց՝ զերկոսին եղբարսն Կումարտիասս՝ զԿոստանց եւ զՊաղտին, զորդիս Հեռեայ սեբաստոսի, որոց եւ սահմանք իշխանութեան եւ բերդորայք՝ էին 'ի գետահովտի անդ Կալիկաղնոսի. ուրանօր գոյին եւ այլ բերդատեարք, յորոց որոշակի յիշի՝ թէպէտ եւ ոչ յանուանէ՝ տէրն Սիւիլայ. որք եւ մի ըստ միոջէ պատարագաւ եւ պարենիւ ելանէին ընդ առաջ կայսեր, եւ զինակրօք 'ի ծառայութիւն նմա. որպէս զի մինչ չեւ մխեալ նորա 'ի բուն սահմանս Սիսուանայ, յոր եւ չեղեւ ժաման, հինգ հազար Հայք խառնեցան 'ի բանակ նորին: Ա՛յլ ընդ այլոյ եւ ստութեամբ պատմեն աստանօր Արաբացիք, դժկամակս ցուցանել զՀայս՝ ընդ գալուստ Ալամանացն եւ ընդ անցս յերկիր իւրեանց. եւ զայս իբրու առ ահի կամ առ մտերմութեան Սալահէտտինայ. եւ մեծագոյն եւս ստայօդ թուղթ մի կարկատեալ են յանուն Գրիգորի որդւոյ Վապի, որպէս թէ կաթողիկոսին Գր. Տղայոյ, առ Սալահէտտին, լրտեսաբար ծանուցանելով նմա զորքանութիւն բանակին Ալամանաց, զարկածս կայսերն եւ զոր յետ այնր: Մարթ էր մատնչի ուրուք Գրիգորի, կամ որպէս գրէ Պոհաէտտին պատմիչ նոցա, *Գագկայ* (Գայգուս) *որդւոյ Գրիգորի, որդւոյ Վապի*, հրամանատարի Հռոմկլայ, զրել այդպիսի ինչ. այլ ամենեւին հեռի եւ օտար է 'ի մտաց եւ 'ի գրչէ կաթողիկոսին եւ Լեւոնի, եւ ամենայն ողջամիտ ծանօթից

²² Լամբրունեցին 'ի յիշատակարանի Պատարագամեկնչին Թուրքք եւ Մարք կոչէ զասպատակն. Սամուէլ Սկեւոցի 'ի յիշատակարանի Սաղմոսամեկնչին՝ «Խորանաբնակ ազգն Իսմայէլի»: